ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ակադեմիական ազնվության մակարդակի և «ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության կանոնակարգ»-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ անցկացված դասախոսական հանդիպման արդյունքներ վերաբերյալ

Հաշվետվություն

30.03.2019թ.

2019թ-ի մարտի 5-ին մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժինը հանդիպում էր կազմակերպել մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը ներկա էին մասնաճյուղի տարբեր ամբիոնների դասախոսներ, նաև ՄԿՈԱ բաժնի որակի ներքին գործընթացներին աջակցող ուսանողական խմբի անդամներ:

Ելույթ ունենալով բաժնի վարիչ Մ.Ճաղարյանը նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 1.2.6. կետի պահանջներից ելնելով (մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ՝ գրագողությունը կանխելու նպատակով) բաժինը հանդիպումներ է կազմակերպել ուսանողների և դասախոսական կազմի հետ: Նախ բաժինը 2018 թվականի դեկտեմբերին որակի ներքին գործընթացներին աջակցող աշխատանքային խմբի օգնությամբ հանդիպումներ է ունեցել մասնաճյուղի առկա ուսուցման ուսանողների հետ: Հանդիպումներն անց են կացվել ֆոկուս-խմբերով: Բաժինը նպատակ ուներ ուսումնասիրելու և պարզելու ուսանողների տեղեկացվածությունը «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ակադեմիական ազնվության կանոնակարգ»-ից (հաստատված՝ ԳԽ, 26.12.2015թ.), մասնաճյուղում ակադեմիական ազնվության առկա մակարդակից ուսանողների բավարարվածությունը, վեր հանելու ակադեմիական անազնվության դրսևորումների ու հետևանքների հետ կապված նրանց խնդիրները, հնարավորություն տալ ուսանողներին ներկայացնել իրենց առաջարկները համալսարանական միջավայրում ակադեմիական ազնվության պահպանման և անազնվության դեմ պայքարի համար: Ապա կատարվել է հարցում, որին մասնակցել են 4 ֆակուլտետների 47 ուսանողներ: Բաժնում ամփոփվել և քննարկվել են ուսանողների կողմից արված առաջարկները և նրանցից առանձնացվել են ուշադրության արժանի մի շարք առաջարկներ:

Հանդիպումից առաջ բոլոր ամբիոններին տրվել է հանդիման օրակարգը, որում ներառված է եղել նաև հանդիպման նպատակը և հանդիպումից բաժնի ակնկալիքները, տրվել են ուսանողների կողմից արված առաջարկները և մասնաճյուղում ակադեմիական ազնվության մակարդակի վերաբերյալ դասախոսների կարծիքի ուսումնասիրության հարցաթերթը: Հարցաթերթը և ուսանողների առաջարկները նախապես տրվել են ամբիոններին, որպեսզի նրանք ժամանակ ունենան քննարկելու, ուսանողների կարծիքներից տեղեկացված լինելու համար և հարցաթերթը լրացնելու միջոցով սեփական կարծիքները արտահայտելու համար:

Դասախոսական կազմի հետ հանդիպման նպատակն էր.

- դասախոսների հետ նույնպես քննարկել գործող «ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության կանոնակարգ»-ը՝ նրանում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու համար,
- բացահայտել ԵՊՀ ԻՄ դասախոսական անձնակազմի կարծիքը և դիրքորոշումը մասնաճյուղում առկա ակադեմիական ազնվության մակարդակի վերաբերյալ,
- բացահայտել ԵՊՀ ԻՄ դասախոսների կողմից նկատված ակադեմիական անազնվության դրսևորումներ,

- ընդհանրացնել ուսանողների և դասախոսների կարծիքները և առաջարկները և մշակել անազնիվ դրսևորումների կանխարգելման քայլեր:

Հանդիպումը նպատակ ուներ կարևորելու ակադեմիական ազնվություն (ԱԱ) պահպանելու, նրա մակարդակը բարձրացնելու և ակադեմիական անազնվության դրսևորումները առավելագույնս կանխելու գործընթացում դասախոսների հիմնարար դերը, և նրանց կարծիքները: Քանի որ դասախոսը պարտավորվում է ոչ միայն մասնագիտական գիտելիք փոխանցել ուսանողին, այն նաև խրախուսել, պահանջել և սեփական օրինակով նրանց բերել առանց անազնվության դրսևորումների ուսումնառության: Իսկ իրենց կարծիքներով և առաջարկներով նրանք կաջակցեն ազնիվ և արդար ուսումնառությանը և մասնաճյուղում ակադեմիական ազնվության մակարդակի բարձրացմանը, նաև կաջակցեն բաժնին ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմների մշակման գործընթացում:

Հանդիպման ժամանակ շնորհանդեսի միջոցով ներկայացվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ակադեմիական ազնվության մակարդակի և «ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության կանոնակարգ»-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ անցկացված ուսանողական հարցման արդյունքները և դրանց վերլուծությունը, մասնավորապես շեշտվել է, որ ըստ այդ արդյունքների հարցման մասնակից ուսանողների **83%-ը** լիարժեք կամ մասնակի բավարարված են մասնաճյուղում ակադեմիական ազնվության մակարդակից: Ապա ներկայացվել են ուսանողների կարծիք-առաջարկները մասնաճյուղում ակադեմիական ազնվության մակարդակի բարձրացման ու ակադեմիական անազնվության դեմ պայքարելու ձևերի վերաբերյալ:

Դասախոսները ողջունեցին ուսանողների իրատեսական կարծիքները և ուսումնական գործընթացում սեփական թերացումներն ընդունելու կարողությունը, քննարկեցին ակադեմիական ազնվության մակարդակի բարձրացման համար ուսանողների կողմից կատարված առաջարկները, դասախոսների կողմից ներկայացվեցին սեփական առաջարկները և պատկերացումները ակադեմիական անազնվության, նրա դրսևորման ձևերի և կանխարգելման քայլերի վերաբերյալ: Ներկաների մեծ մասը իրատեսական և արդարացի չհամարեցին (ըստ գործող կարգի) ակադեմիական անազնվության դրսևորումների համար ուսանողներին լուրջ պատասխանատվության ենթարկելու փաստը: Մի մասի կարծիքով ակադեմիական ազնվության բարձրացման լավագույն տարբերակը ուսանողի գիտակցական համակարգում վերջինիս կարևորությունն ընդունելի դարձնելն է:

Ներկայացնենք հարցմանը մասնակցած դասախոսների կարծիքները առաջադրված հարցերի վերաբերյալ: Նշենք, որ անցկացված հարցմանը նկատվել է դասախոսների պասիվ մասնակցություն, ինչը մտահոգվելու տեղիք է տալիս: Անանուն հարցմանը մասնակցել են մասնաճյուղի տարբեր մասնագիտության թվով **27 դասախոսներ՝** հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի **37%-ը (73 դասախոսներից)**, և ընդհանուր պրոֆեսորադասախոսական կազմի **18%-ը (150 դասախոս)**:

Ըստ ֆակուլտետների մասնակցությունն ուներ հետևյալ պատկերը.

	Ընդամենը	Մասնակցություն	
		քանակ	%
ԲԳՖ	12	5	**42%**
ԿԱՖ	9	4	**44%**
ՀԳՖ	32	10	**31%**
ՏԳՖ	20	8	**40%**
Ընդամենը	73	27	**37%**



Հարցաթերթը պարունակել է բաց հարցեր, որոնց պատասխաններում դասախոսները մանրամասն ներկայացրել են իրենց տեսակետները մասնաճյուղում ակադեմիական ազնվության ներկա մակարդակի վերաբերյալ, նշել են իրենց նկատած անազնիվ դրսևորումները և դրանց կանխելու իրենց կողմից ձեռնարկված քայլերը, ներկայացրել են իրենց տեսակետները ակադեմիական անազնվության դիմելու դրդապատճառների (թե՛ ուսանողների, և թե՛ դասախոսների կողմից) վերաբերյալ, կատարել են առաջարկներ մասնաճյուղում ակադեմիական ազնիվ աշխատանքի (հատկապես ավարտական աշխատանքների) ապահովման և ակադեմիական ազնվության մակարդակի բարձրացման համար:

Հարցման առաջնահերթ նպատակներից մեկը դա ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության կանոնակարգից տեղեկացվածության մակարդակը պարզելն էր: Իհարկե, դասախոսների պասիվ մասնակցության արդյունքում հնարավոր չէ չտեղեկացվածության մասին եզրակացություն կատարել, այնուամենայնիվ, կանոնակարգից հարցմանը մասնակցած դասախոսների տեղեկացվածությունն ունի հետևյալ պատկերը.





Ինչպես երևում է գրաֆիկներից, հարցմանը մասնակցած դասախոսների 67%-ը տեղեկացված է ԵՊՀ իջևանի մասնաճյուղում ներդրված ակադեմիական ազնվության կանոնակարգից:

Ավելի կարևոր էր, թե գործող կարգը որքանո՞վ է ընդունելի և արդյո՞ք կանոնակարգում լրացումներ և փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն կա, և այդ առումով ի՞նչ առաջարկներ ունեն դասախոսները: Հարցաթերթի «Ի՞նչ լրացում կամ փոփոխություն կառաջարկեիք կատարել «ԵՊՀ ԻՄ ԱԱ կանոնակարգում» բաց հարցին դասախոսները տվել են հիմնականում չեզոք և խուսափողական պատասխաններ, իսկ մի մասն ուղղակի չի պատասխանել՝ կանոնակարգից տեղեկացված չլինելու պատճառով:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հարցման մասնակիցներից մեկի կոնկրետ առաջարկին՝ «վերանայել կանոնակարգի 3.2.1. կետի ենթակետերը, և վերամիավորել 3.2.4 կետի ենթակետերը (տես Հավելվածը):

Նշենք, որ ըստ կանոնակարգի, մասնաճյուղում <u>ակադեմիական անազնվության</u> դեպքում ուսանողը հեռացվում է մասնաճյուղից (էթիկայի հանձնաժողովի որոշմամբ): Հարցման մասնակիցները գտնում են, որ դա բավականին խիստ միջոց է անազնվության կամայական դրսևորման համար, և գտնում են, որ պատժամիջոցները պետք է լինեն կիրառելի և ունենան գործօգուտ սկզբունք: Նշենք, որ նման առաջարկ կատարել են նաև ուսանողները:

Հարցման հաջորդ նպատակն էր պարզել մասնաճյուղում <u>ակադեմիական ազնվության մակարդակն ըստ դասախոսների</u>, և հավաքագրել առաջարկներ և մեթոդներ՝ ազնվությունը բարձրացնելու և անազնվությունը կանխելու համար:

Հաշվի առնելով գրագողության և առհասարակ ակադեմիական անազնվության դրսևորումների տարածվածությունը և նաև նրանց միջազգային խնդիր հանդիսանալու փաստը, մասնաճյուղում ակադեմիական ազնվության մակարդակից լիարժեք բավարարվածության 0% - ը

կարելի է սպասելի համարել: Կրթական համակարգերում ակադեմիական անազնվության դրսևորումները կանխարգելելը ցանկացած բուհի առաջնահերթ խնդիրն է, և մի գուցե ամբողջությամբ կանխել հնարավոր չէ, սակայն պետք է պայքարել նման դրսևորումների քչացման համար, գտնել մեխանիզմներ, կիրառել օրենքներ և այլն:



Դիտարկելով ներկայացված տվյալները կարելի է փաստել, որ հարցման մասնակիցները ընդհանուր առմամբ բավարարված են մասնաճյուղում ակադեմիական ազնվության մակարդակից (**74%**). նրանց 11%-ը բավարաված են և 63%-ը բավարված են մասամբ:

Նշենք, որ ակադեմիական ազնվության մակարդակից բավարարվածության վերաբերյալ մասնաճյուղի ուսանողների տեսակետները գրեթե համընկել են դասախոսական կազմի տեսակետների հետ: Սակայն հաշվի առնելով այն փաստը, որ ուսանողները ակադեմիական անազնվության հիմնական պատճառ համարել են իրենց անտարբերությունը և անազնիվ ճանապարհով բարձր գնահատական ստանալու միտումը, կարելի է համարել, որ բավարարվածության ընդհանուր մակարդակով՝ 9%+64%=**73%**, ուսանողներն ավելի խիստ են մոտեցել իրենց էթիկական վարքագծի գնահատմանը, ինչը ողջունելի է:



Մասնաճյուղում նկատված անազնվության դրսևորման օրինակներ են նշել հարցման 14 մասնակիցներ: Ըստ ՀՀ-ում կատարված տարբեր հետազոտությունների արդյունքների և մասնավորապես, մասնաճյուղում անցկացրած հարցման արդյունքների, թե՛ մասնաճյուղում, և թե՛ այլ բուհերում ակադեմիական անազնվության ամենատարածված դրսևորումը դա գրագողությունն է՝ արտագրության ձևով: **<u>Դասախոսների 78%-ը</u>** (11 պատասխանից) նշել է գրագողությունը, այդ թվում՝ արտագրությունը կազմել է վերջինիս 72%-ը:

Արտագրության տարածման հարցում խթանիչ գործոն է համարվում տեղեկատվական տեխնոլոգիաների՝ հեռախոսների, ականջակալների և այլ տեխնիկական միջոցների արագ զարգացումը և հասանելիությունը: Այն մեծ ծավալով մուտք է գործել կրթական համակարգ, որի արդյունքում այն դառել է ուսումնական հաստատությունների առջև դրված կարևորագույն խնդիր՝ պայքարը արտագրության դեմ և նրա կանխարգելումը, լավագույն դեպքում՝ արտագրության դեպքերի նվազեցումը, կամ նրանց լիարժեք վերահսկելի դարձնելը: Նշենք, որ մասնաճյուղի ուսանողները նույնպես գրագողության ամենատարածված դրսևորումը նշել են արտագրությունը:

Դասախոսները մասնաճյուղում առկա անազնվության դրսևորումներ են համարել այլ անձի կողմից կուրսային, ավարտական և ռեֆերատային աշխատանքների կատարումը (մասնակիցների **21%-ը),** մանիպուլացիան, սուբյեկտիվությունը, անարդար գնահատականը, հղումների չկիրառումը կամ սխալ կիրառումը՝ 1%-2%: Ըստ դասախոսների, վերոնշյալ դրսևորումների բացահայտման դեպքում նրանց կողմից ձեռնարկված կանխարգելման միջոցներ են եղել ուսանողին քննասենյակից հեռացնելը, նրանց հետ բացատրական աշխատանքներ տանելը, քննական գործընթացը էլ ավելի վերահսկելի դարձնելը, քննական առաջադրանքը փոխելը, աշխատանքը չընդունելը և այլն:

Դասախոսի կողմից ակադեմիական անազնվության դիմելու դրդապատճառ հարցմանը մասնակցած դասախոսները նշել են ցածր աշխատավարձը և սոցիալական պայմանները: Իսկ ուսանողի կողմից ակադեմիական անազնվության դիմելու դրդապատճառ համարել են անվճար սովորելու, բարձր գնահատական ստանալու, լավը երևալու ձգտումները, անտարբերությունը, թերի գիտելիքները, նաև գրականության պակասը:

Ուսանողներն այս հարցում ևս համակարծիք են եղել դասախոսների հետ՝ անազնվության հիմնական դրդապտճառ համարելով իրենց իսկ կողմից անառողջ մրցակցությունը ռոտացիայի և զեղչերի համար, անտարբերությունը կրթության նկատմամբ: Սակայն ուսանողները շեշտել են նաև դասախոսի անուշադրությունը և այն հնարավորությունները, որ տալիս է դասախոսը ակադեմիական անազնվության դիմելու համար (քննության թույլ վերահսկողություն, կողմնապահություն, թեստերի ոչ ճիշտ կազմում):

Ակադեմիական անազնվությունը կանխելու և ազնվության մակարդակը բարձրացնելու համար հարցմանը մասնակցած դասախոսները առաջարկել են.

- ակադեմիական ազնվության կանոնակարգում հստակեցնել անազնվության դրսևորումները, դրանց համար նշանակված տույժերը և կիրառել,
- խստացնել քննության ընթացքը, ուսանողներին քննության թողնել միայն գրիչով (առանց տեխնիկական միջոցների),
- լինել ավելի հետևողական, ուսանողների նկատմամբ լինել ավելի խիստ,
- ի ցույց դնել 5 լավագույն ավարտական աշխատանքները,
- դասընթացները դասավանդվի միայն մասնագետի կողմից,
- ուսանողներին տալ առավելագույն չափով տեղեկատվություն ակադեմիական ազնվության և անազնվության վերաբերյալ, անազնվության դրսևորումների կանխարգելման և տույժերի մասին,
- ուսանողների շրջանում հաճախակի տանել բացատրական աշխատանքներ,
- ավարտական աշխատանքի համար սահմանել գնահատման հատուկ ձևաչափ՝ ըստ ուսանողի առաջադիմության:

Իսկ ընդհանրապես, դասախոսները լավագույն լուծում համարում են ուսանողի մոտ սովորելու ցանկության և կրթության կարևորությունը գիտակցելու արժեհամակարգ ձևավորելը: Դաստիարակչական այս մեթոդի համար, ակնհայտ է, անհրաժեշտ է ուսանողների հետ աշխատանքի, դասավանդման և ուսումնառության համապատասխան մեխանիզմներ և մեթոդներ:

Փաստենք, որ ուսանողները նույնպես ռաջարկել են խստացնել քննության ընթացքը, թեստերը կազմել ըստ կարգի և հետևողական լինել կանոնակարգի կիրառմանը:

Ելնելով ուսանողների և դասախոսների հետ հանդիպման և անցկացրած հարցումների արդյունքներից, նրանց վերլուծությունից ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժինն որոշել է վերանայել ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության կանոնակարգը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով ակադեմիական անազնվության դրսևորման դեպքում պատասխանատվության ենթարկելու

ձևերին։ Նաև բաժինն աշխատում է էթիկայի կանոնագրքի վրա, որը կներառի էթիկայի նորմերը և էթիկական վարքգծի կանոնները, ակադեմիական ազնվություն և անազնվություն գաղափարների սահմանումները, անազնվության կանխարգելման ձևերը, նրա դրսևորման առկայության դեպքում կիրառվող տույժերը։

Իսկ շահագրգիռ կողմերին (ՈՒՄՎ աշխատակիցներ, դեկաններ, ամբիոնի վարիչներ, ուսանողական կառույցների ներկայացուցիչներ, ուսանողներ) ՄԿՈԱ բաժինը խորհուրդ է տալիս.

- հետևողական լինել կանոնակարգի կիրառման նկատմամբ,
- բարձրացնել քննության հսկողությունը, լինել առավել ուշադիր,
- ուշադրություն դարձնել թեստերի կազմմանը, հարցերի ընտրությանը,
- մշակել ազնիվ ճանապարհով կրթություն ստանալու մոտիվացիան ուսանողների մոտ բարձրացնելու մեխանիզմներ,
- ուսանողների լավագույն հետազոտական աշխատանքները ներկայացնել խրախուսման և հրապարակայնացնել։

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին

3.2. Ակադեմիկան անազնվություն է համարվում՝

3.2.1. **գրագողությունը՝**

- ուրիշի ստեղծագործությունը որպես սեփական ներկայացնելն է կամ ուրիշի ստեղծագործության անօրինական հրապարակումը իր անվամբ, այլ կերպ՝ հեղինակության յուրացումը,
- այլոց գաղափարները, հետազոտությունները և մտավոր աշխատանքները սեփականացնելը և որպես ինքնուրույն աշխատանք ներկայացնելը,
- այլ հեղինակների գաղափարների, հետազոտությունների ուսումնասիրությունների և մտավոր աշխատանքների մասնակի յուրացումը,
- որևէ աշխատանքի՝ առանց իրական հեղինակին և աղբյուրը նշելու մասնակի կամ ամբողջական ընդօրինակումը այլևայլ աղբյուրներից, ինչպիսիք են՝ համացանցը, հոդվածները, գրքերը, ամսագրերը և այլն,
- որևէ ինտերնետային կայքից արտագրելը,
- գրքից, թերթից կամ ամսագրից հոդված արտագրելը,
- օգտագործված աղբյուրների և գրականության ցանկի՝ ակնհայտ խախտումներով ձևավորումը,
- սխալ հղումներ տալը, երբ ուսանողն իր աշխատանքում «Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկում» ներառում է գիրք, որին ինքն անձամբ չի ծանոթացել և աշխատանքում դրան հղում չի արվել: Այդ ցանկում պետք է տիպաբանված ներկայացվեն միայն աշխատանքում օգտագործված աղբյուրները: Իսկ այն աղբյուրները, որոնք աշխատանքի հեղինակի համար եղել են ներշնչանքի աղբյուր կամ նրա հայացքները ձևավորվել են դրանց ազդեցությամբ, պետք է ներկայացվեն օգտագործված աղբյուրների ցուցակից առանձին ցուցակով, օրինակ՝ «Թեմատիկ գրականություն» վերնագրի տակ,
- գնել (կամ այլ կերպով ձեռք բերել) այլ անձի կողմից կատարած աշխատանք կամ այլ առաջադրանք և ներկայացնել որպես ինքնուրույն աշխատանք,
- կրկնել վիճակագրական կամ դեմոգրաֆիական տեղեկությունները, որոնք հանրամատչելի չեն և սկզբնապես կազմվել են այլ անձի կողմից:

3.2.4. կեղծումը՝

- գնահատականների կամ պատասխանների կեղծում՝ այլ գնահատական ստանալու նպատակով,
- ակադեմիական գրառումների և/կամ այլ փաստաթղթերի կեղծում՝ ակադեմիական շահ ստանալու նպատակով,
- այլ սովորողի կամ ակադեմիական աշխատանքի կեղծում,
- այլ սովորողի ակադեմիական աշխատանքի վնասում,
- արգելված նյութերի կամ էլեկտրոնային հարմարանքների կիրառումը գիտելիքների ստուգման ընթացքում,
- քննության ժամանակ քննական հարցերի պատասխանների տրամադրումը այլ ուսանողների,
- կեղծել ցանկացած լաբորատոր կամ փորձնական աշխատանքի արդյունքերը կամ ցանկացած տվյալներ և տեղեկություններ,
- փոփոխել ցանկացած ակադեմիական աշխատանք այն ներկայացնելուց հետո, բացառությամբ այն դեպքերի, եթե նման փոփոխությունները մտնում են առաջադրանքի

պահանջների մեջ (ինչպիսիք են՝ դասախոսի գիտությամբ վերանայել տվյալ ակադեմիական աշխատանքը),

- փոփոխել գնահատականների, լաբորատոր կամ հաճախելիության գրանցումները,
- վնասել համակարգչային սարքավորումները (այդ թվում՝ սկավառակները) կամ լաբորատոր սարքավորումները ակադեմիական աշխատանքի գնահատումը փոփոխելու կամ կանխելու համար, օգտվել այլ անձին պատկանող համակարգչային նշանաբառից, վնասել ինտերնետային կայքի բովանդակությունը կամ մատչելիությունը, գործել այլ անձի փոխարեն՝ համակարգչային ռեսուրսներ ձեռքբերելու նպատակով,
- ակադեմիական աշխատանքի անբավարար կատարման կամ չկատարման դեպքում կեղծ պատճառաբանություններ բերել (նախօրոք կամ փաստից հետո): (Օրինակ՝ քննությանը չներկայանալու կամ ակադեմիական աշխատանքը չներկայացնելու համար դասախոսին կամ համալսարանի համապատասխան պաշտոնական աշխատակցին տալ կեղծ պատճառաբանություններ):